Միսաք Մեծարենց

Մեղուները

Տենչանքներրս, տարագնացի՜կ մեղուներ,
ոսկի երիզ մը բանալով
ու զանակներ անձրևելեն
թրռան, գացին, երամ երամ.
անցան, գացին դարուղիեն,
կիսաթափանց մրշուշներու ապրշում քողքը պատռելեն
և հածելեն մեջն արևին ոսկեծաղիկ մառախուղին:

Արևակի, սուտակներու ու զյումրյութի
փաղփուն երանգը ծրծելով իրենց չորս դին,
ծործորներեն, բացավայրեն,
ու ցորենի գանդաշներեն անցան անդին.
ես գետափին մոտ մընացի վարատակա՜ն,
մելամաղձիկ երազս հրդած
դեպ հեռավոր ծաղկաստաններ՝
ուր թառեցան մեղուներն իմ տենչանքներուս:

Մեղուներն իմ տենչանքներուս՝
միջօրետքի պահերեն վերջ,
որոնց դարձին ես կրսպասեմ՝
ուղեկուրուս զակատելով:
Ահա՜ օրն ալ մրթագնեցավ,
և ես ի զո՜ւր տարաժամ

դեռ կըսպասեմ անոնց հնքոտ ու մեղրազօծ վերադարձին:

Ա՜հ, այս ցայգուն
պիտի անցնիմ դարձյալ Վախիս ճամփաներեն
ալ հափրացա՜ծ, ուշակորոյս,
գիշերներու ըմպած գինին խավարածոր,
պիտի անցնի՜մ ես այս գիշեր՝
երկյուղիս սեպ ճամփաներեն,
իմ գանկիս տակ
հոյսի ոսկի բոցին անուրջն առկայծելեն:

Ալ հոգնա՜ծ եմ
ըսպասելեն տենչանքներուս մեղրին անույշ,
ու տարաժամ այս հածումին մեջ երջանի՜կ պիտի ըլլամ,
եթե թունեղ խա՜յթ իսկ բերեն
ուղեմոլար մեղուներն իմ տենչանքներուս: